ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 փետրվարի 2017թ. թիվ 47-Ա

Լ.ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34 կետը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Սարամեջի Մ.Ֆարմանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի 2017 թվականի հունվարի 31-ի գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Լիլիթ Մալխասյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Սարամեջի Մ.Ֆարմանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2017 թվականի փետրվարի 3-ից:

2. Լ.Մալխասյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. փետրվարի 2
ք.Վանաձոր